ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 09
վիճակագրության պետական խորհրդի նիստի

---

01.09.2014թ. ժ.11:00

**Մասնակցում էին՝**
Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Յու. Պողոսյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ.Գրիգորյան (խորհրդի քարտուղար)
**Հրավիրված էին՝** Գ.Անանյան (խորհրդի անդամ), Լ.Միրզոյան (ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ), Ա. Հայրապետյան (աշխատակազմի ղեկավար), Ա. Ավագյան (գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ), Գ. Նշանյան (գյուղատնտեսական համատարած հաշվառման պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ), Դ.Մարտիրոսովա (տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ), Հ. Հակոբյան (արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ):

**Օրակարգի նախագծում չորս հարց.**

**1.** «ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ոչ պիտանի գույքի տնօրինման մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**2.** ««Հաշվետվություն գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարզային և Երևան քաղաքի գործակալություններում համակարգողի», «Հաշվետվություն հաշվառման տեղամասի վարիչի» և «Հաշվետվություն հրահանգիչ-հսկիչի» ձևերի նախագծերն ընդունելու մասին» հարցը:
*/Զեկուցող՝ Գ.Նշանյան/*

**3.** Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
3.1. Հաղորդում՝ Ավստրիայի Վիեննա քաղաքում 2014 թվականի հուլիսի 7-ից 11-ը «Ինոգեյթ» ծրագրի շրջանակում կազմակերպված Ավստրիայի, Խորվաթիայի և Լատվիայի էներգետիկայի վիճակագրության փորձին և վառելիք-էներգետիկ հաշվեկշիռներին նվիրված աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ՝ Գ.Անանյան, Հ.Հակոբյան/*

3.2. Հաղորդում՝ Ֆինլանդիայի Թուրքու քաղաքում 2014 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 1-ը ««Ժամանակի օգտագործում» ուսումնասիրողների համայնքի միջազգային միավորումը, Տուրկուի համալսարանի, Աբո ակադեմիական համալսարանի և Ֆինլանդիայի վիճակագրության կողմից կազմակերպված ամենամյա պարբերականությամբ անցկացվող «Ժամանակի օգտագործում» ուսումնասիրողների համայնքի 36-րդ միջազգային կոնֆերանսին, «Ժամանակի օգտագործում. Տեսությունից պրակտիկա» թեմայով, ինչպես նաև «Ժամանակի օգտագործում» հետազոտության տվյալների հիման վրա «Տնային տնտեսության արտադրության ծավալների հաշվարկ» խորագրով ուսուցողական սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող՝ Դ. Մարտիրոսովա/*

**4.** Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:
/Քվեարկության արդյունքները-կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/

**Լսեցին`**
**1.** «ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ոչ պիտանի գույքի տնօրինման մասին» հարցը:
*/Զեկուցող` Ա.Հայրապետյան/*

**Որոշեցին`**
հաստատել գնահատված արժեք ունեցող ապրանքների համար գույքի օտարման և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի պահեստում, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Տավուշի մարզային գործակալություններում առկա օգտագործման համար ոչ պիտանի զրո դրամ գնահատված հիմնական միջոցները, փոքրարժեք և արագամաշ առարկաներն ամբողջությամբ աղբավայր հանձնելու գործընթացներն ըստ հավելվածներ 1-ի, 2-ի և 3-ի:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին`**
**2.** **«**«Հաշվետվություն գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարզային և Երևան քաղաքի գործակալություններում համակարգողի», «Հաշվետվություն հաշվառման տեղամասի վարիչի» և «Հաշվետվություն հրահանգիչ-հսկիչի» ձևերի նախագծերն ընդունելու մասին» հարցը:
*/Զեկուցող` Գ.Նշանյան/*

**Որոշեցին`**
հաստատել «Հաշվետվություն գյուղատնտեսական համատարած հաշվառման աշխատանքները Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության մարզային և Երևան քաղաքի գործակալություններում համակարգողի», «Հաշվետվություն հաշվառման տեղամասի վարիչի» և «Հաշվետվություն հրահանգիչ-հսկիչի» ձևերն ըստ ներկայացված հավելվածների:
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

**Լսեցին`**
**3.** Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.
3.1. Հաղորդում` Ավստրիայի Վիեննա քաղաքում 2014 թվականի հուլիսի 7-ից 11-ը «Ինգեյթ» ծրագրի շրջանակում կազմակերպված Ավստրիայի, Խորվաթիայի և Լատվիայի էներգետիկայի վիճակագրության փորձին և վառելիքա-էներգետիկ հաշվեկշիռներին նվիրված աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցողներ` Գ.Անանյան, Հ.Հակոբյան/*

3.2. Հաղորդում` Ֆինլանդիայի Թուրքու քաղաքում 2014 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 1-ը ««Ժամանակի օգտագործում» ուսումնասիրողների համայնքի միջազգային միավորումը, Տուրկուի համալսարանի, Աբո ակադեմիական համալսարանի և Ֆինլանդիայի վիճակագրության կողմից կազմակերպված ամենամյա պարբերականությամբ անցկացվող «Ժամանակի

օգտագործում» ուսումնասիրողների համայնքի 36-րդ միջազգային կոնֆերանսին, «Ժամանակի օգտագործում. Տեսությունից պրակտիկա» թեմայով, ինչպես նաև «Ժամանակի օգտագործում» հետազոտության տվյալների հիման վրա «Տնային տնտեսության արտադրության ծավալների հաշվարկ» խորագրով ուսուցողական սեմինարին» մասնակցելու վերաբերյալ:
*/Զեկուցող` Դ. Մարտիրոսովա/*

**Որոշեցին`**
արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին հաղորդումներն ընդունել ի գիտություն
*/Անհատական/*
*/Քվեարկության արդյունքները- կողմ` 5, դեմ` 0, ձեռնպահ` 0/*

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ